ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ նոր և նորագույն գրականության և նրա
դասավանդման մեթոդկայի ամբիոնի հայցորդ
zoyamovses92@gmal.com

ՄԻՖԱԿԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ
(ԷԴ. ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ «ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ» ՎԵՊԸ)

Բանալի բառեր և արտահայտություններ. Վահագն, արկածներ, ճանապարհորդություն, միջնախաղ, ինքնասպանություն, զրույց վիշապի հետ:

Ключевые слова и выражения: Ваагн, приключения, путишествия, эпдшпиль, самоубиицтво, беседа с драконом.

Key words and expressions: Vahagn, aolventures, journey, endshpil, suicide, conversation with a dragon.

Հոդվածում քննարկվում են Էդ. Միլիտոնյանի «Վահագն վիշապաքաղի արկածները» վեպում իրականի և միֆականի համադրման փորձերը: Ցույց է տրվում, որ հեղինակը կերպարակերտման յուրահատուկ եղանակով արծարծում է պատանի ընթերցողի համար կարևոր ճանաչողական ու դաստիարակչական նշանակություն ունեցող հարցեր:

Մանկապատանեկան ընթերցանության համար նախատեսված արկածային ստեղծագործություններով վերջին տասնամյակների հայ գրականությունը բավական աղքատ է: Եվ սա այն դեպքում, երբ արկածային ստեղծագործությունները շատ կարևոր են հատկապես դպրոցական միջին տարիքի երեխաների կրթության ու դաստիարակության կազմակերպման գործում:

Արկածային ստեղծագործությունները պատանի ընթերցողներին դաստիարակում են բարոյականային մի շարք որակներով. մղում են երևակայական թռիչքների, խորացնում են նրանց իմացությունների շրջանակները, բացահայտում են մարդու և բնության հարաբերությունների

նորովի ընկալումներ, իրականի ու երևակայականի համադրման նոր եզրեր, չարի և բարու հավերժական պայքարի վերաբերյալ ներ պատկերացումներ:

Մեծ հաշվով՝ արկածային ստեղծագործություններում պատանի ընթերցողը հանդիպում է հերոսների, որոնք օժտված են բարձր առաքինություններով, ուժեղ են, անվախ, չարի դեմ պայքարելու համար՝ միշտ պատրաստակամ, կարողանում են ճիշտ կողմնորոշվել ամենաբարդ իրավիճակներում, ելք գտնել անելանելի իրավիճակներից:

Հիշենք, թեկուզ, թե ընթերցողների ինչպիսի մեծ բանակ ունեին և այժմ էլ ունեն Վախթանգ Անանյանի «Հովազաձորի գերիները», «Սևանի ափին», Սերո Խանզադյանի «Քարանձավի բնակիչները» ստեղծագործությունները, որոնք թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով, հրատարակվել միլիոնավոր տպաքանակներով:

Այդ ստեղծագործությունները պատանի ընթերցողի համար ուշագրավ են նախ այն առումով, որ նրանց հերոսները ընթերցողի հասակակիցներն են, որոնք հայտնվելով անելանելի թվացող իրավիճակներում, կարողանում են իրենց դրսևորել որպես նոր ռոբինզոններ, ցուցաբերում են կամային բարձր հատկանիշներ, բնության վերաբերյալ իրենց իմացություններն օգտագործել դժվարությունները հաղթահարելու համար:

Այդ ստեղծագործությունները պատանի ընթերցողին ընկերասիրության, միմյանց սատարելու, միասնական ջանքերով բնության աղետներին դիմակայելու, ռոբինզոնների պես կեցության քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու անմոռանալի փաստեր են տալիս, որոնք շատ կարևոր կարող են լինել նրանց հետագա ողջ կյանքի համար:

Անկախության տարիներին Էդուարդ Միլիտոնյանը, թերևս, միակն է, որ ընթերցողի սեղանին դրեց արկածային ստեղծագործություններ՝ «Սատանի կամուրջը» և «Վահագն Վիշապաքաղի արկածները» վեպերը, որոնք հայ մանակապատանեկան արձակի լավագույն էջերից են և մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում պատանի ընթերցողների կողմից: «Վահագն Վիշապաքաղի արկածները» (2003) վեպը ուշագրավ է մտահաղացման և կառուցվածքի տեսանկյունից: Ժանրային առումով այն վեպի, կարելի է ասել, նոր տեսակ է՝ իր յուրահատուկ կառուցվածքով: Վեպ է՝ ընթերցողին լարվածության մեջ պահող այուժեով, ֆաբուլայով, հանգույցներով ու հանգուցալուծմամբ, կերպարների բազմազանությամբ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է աշխարհագրական տարբեր հարթություններում, ժամանակի անցյալ-ներկա-ապագա չափումների համապատկերում: Վեպի կերպարները ներկայացված են առասպելականի ու իրականի սահմանագծին, որտեղ ծավալվող գործողությունները

համադրվում են հրաշապատումի ու իրապատումի փոխազդեցություններով:

«Վահագն Վիշապաքաղի արկածները» նոր է իր տեսակի մեջ այն առումով, որ հեղինակը «խախտում է» ժանրի վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ համադրելով ժանրային մի քանի տեսակներ՝ առասպել, ասք, ձոներգ, բանաստեղծություն, նովել՝ անակնկալ հանգուցալուծումներով ու երկխոսություններով:

Վեպի առանցքում միֆականի ու իրականի համատեղումն է: Միֆականը վեպում հանդես է գալիս որպես գիտակցական հստակ վիճակ՝ ենթատեքստում ունենալով իրականին խիստ մոտ կամ նման դրսևորումներ:

Առասպելական Վահագնին պատանի ընթերցողը ծանոթ է դեռևս առասպելից: Էդ. Միլիտոնյանը Վահագնին ներկայացնում է ավելի լայն պլանով, ավելի լայն հարաբերությունների ոլորտներում:

Առասպելական Վահագնը ծննդյան առաջին օրից մտածում է աշխարհը վերափոխելու մասին, այն հաշվով, որ վերափոխված աշխարհում չլինեն ուժեղներ և թույլեր, ճնշվածներ ու լքվածներ, որ բոլոր շնչավոր արարածներն ապրեն հաշտ ու խաղաղ, որ «թռչուններն ու մարդիկ չտանջվեն չար ուժերի ձեռքից», որ «աշխարհը դառնա միասնական, ամբողջական, գեղեցիկ ու անխորտակելի»[1]:

«Եղեգան փողից դուրս թռչելուց անմիջապես հետո» Վահագնը հայտնվում՝ «կապույտ, ցերեկային երկնքում, և նրա սիրտը ճչում է ուրախությունից»: Կապույտ հեռուներից նա նայում է ներքև, ուր «գետերի փայլուն ժապավեններ են, դաշտերի ու հովիտների թավշյա սփռոցներ, որոնց վրա ճոճվում են հազարագույն ծաղիկներ ու խոտեր: Վահագնը այն բոլորը լավ է ճանաչում, քանզի նույն հողից է սկիզբ առել, և նրանց արմատների ու նախնիների հետ նույն հողի մեջ գոյատևել էր մինչև եղեգան փողից լույս աշխարհ գալը»(4):

Եվ որպեսզի աշխարհը դառնա «միասնական, ամբողջական, գեղեցիկ ու անխարտակելի», Վահագնը հանուն բարու հաղթանակի կռվում է վիշապների հետ, որպեսզի նրանք վերանան աշխարհից, ահուսարսափ չտարածեն ամենուրեք: Հայոց աշխարհի վիշապների դեմ չի կռվում Վահագնը միայն, այլ բոլոր չար ուժերի դեմ, որովհետև մարդն ամենուր մարդ է, չարիքը՝ չարիք:

---

[1] Միլիտոնյան Էդ., Վահագն Վիշապաքաղի արկածները, Եր., «Ծիծեռնակ», 2003, էջ 5: Այսուհետև տեքստում կնշվի միայն էջը:

Հաղթելով վեցգլխանի վիշապ Զարզանդին, Լճաշեն գյուղի յոթգլխանի Զորբա վիշապին, Սևանի ավազանի ու շրջակայքի՝ Սյունյաց աշխարհի, Վանա լճի, Լոռվա և Շիրակի բոլոր վիշապներին և Հայոց երկրին ազատելով չար ուժերից՝ Վահագնը մտածում է ոչնչացնել նաև աշխարհի մնացած ժողովուրդներին պատուհասող վիշապներին, որպեսզի դեռահաս աղջիկները չապրեն մոտալուտ մահվան սարսափների մեջ, որպեսզի գետերը հոսեն ազատ, աղբյուրները կարկաչեն, աշխարհի բոլոր դաշտերն ու հովիտները ծածկվեն թավշյա սփռոցներով:

Այդ նպատակով նա ոչնչացնում է նաև Պարսկաստանի Քյանդրվան գյուղի, Հնդկաստանի Էլեֆանի կղզու, Եգիպտոսի, Չինաստանի և այլ երկրների վիշապներին՝ առասպելական իր դիմագիծը հարստացնելով իրական հաղթանակներով ու դափնիներով: Ահա այստեղ է ընթերցողը հանդիպում միֆական կերպարին ու իրական հերոսին՝ առասպելի Վահագնին ու Վահագն-մարդուն, որ կարողանում է տեսնել գեղեցիկը, հիանալ բնության հրաշալիքներով, սիրել բոլոր շնչավոր արարածներին, զգալ հողի կենարար ուժը, հզորանալ նրանով:

Իսկ առասպելական Վահագնը, որ գերբնական ուժի տեր է, երբեք ի չարս չի գործադրում իր այդ առավելությունը: Նա երեխաների հետ երեխա է, իմաստունների հետ՝ իմաստուն, խոհեմ ու հնարամիտ: Նրա կռիվը վիշապների ու դևերի դեմ է, բոլոր չար ուժերի դեմ, որոնք մարմնավորում են Քաոսը, լույսը, մթագնում խավարով:

Առասպելական Վահագնը հավասարը հավասարի պես շփվում է հզոր աստվածների հետ, նրանց զարմացնում ոչ միայն ուժով, այլև խելացիությամբ, հնարամտությամբ, նպատակասլացությամբ: Նա վեպում ներկայացված է որպես հայի տեսակի մարմնացում, մի տեսակի, որը աշխարհի բոլոր ծագերում նախ զարմանք, ապա հիացմունք է առաջ բերում իր նկատմամբ. Դևերն ու վիշապները զարմանում են, որ մարդ կոչվող այդ տարօրինակ երևույթը համարձակվում է դեմ առ դեմ մարտնչել իրենց հետ, իսկ նրա հաղթանակով փառավորվում են եգիպտական փարավոնը, հնդկական ռաջաները, չինական, պարսկական ու այլ երկրների մեծամեծերը, ովքեր հաճախ հիացմունքի խոսքեր չեն գտնում իրենց երախտագիտությունը հայտնելու համար:

Առասպելական Վահագնի վեջնական հանգրվանը Հայոց երկիրն է, ուր ապրում է Աստղիկ աստվածուհին, ուր բոլորը գողթան երգիչներ են, հողի մշակներ, շինարար վարպետներ: Ցնծությամբ են նրան ամեն անգամ դիմավորում հայոց աշխարհում, նրա հետ ամեն մի հանդիպում վերածվում է համաժողովրդական տոնախմբության. «Հայաստանի Վան մայրաքաղաքում անօրինակ տոնահանդես էր. նվագում էին

պարկապզուկներ, շվիները, դափեր, և Գագիկ Վանեցու գլխավորությամբ թմբկահարում էին Վահագնի հաղթանակները:

Ընթերցողի հետ «ճամփորդելով» աշխարհի տարբեր երկրներում՝ հեղինակը նրանց առջև բացում է բազում դռներ, ծանոթացնում այդ երկրների սովորություններին, բարքերին, ծիսական արարողություններին, մշակութային արժեքներին, ինչը շատ կարևոր է միջին դպրոցականների իմացական շրջանակների ընդլայնման համար:

Վահագնի վերջին «մենամարտը» շախմատի դաշտում էր, աշխարհի չեմպիոն Գարի Կասպարովի հետ: Գարին ընտրում է «Վիշապ» (дракон) սկզբնախաղային տարբերակը: Մենամարտն ավարտվում է ոչ ոքի արդյունքով: Դա ոչ թե մենամարտ էր բառի իսկական իմաստով, այլ երկու մեծ անհատականությունների հանդիպում, որն ուղեկցվում էր անկեղծ երկխոսություններով ու մենախոսություններով. «Ինձ համար դժվար մարտ էր, չեմ հիշում, որ որևէ վիշապ պրծներ իմ ձեռքից,-մտածում է Վահագնը,-ինչ արած, սա շախմատ է, և թող աշխարհի բոլոր վիշապները գոյատևեն միայն շախմատում,-ասում է չեմպիոնը»(128):

Էդ. Միլիտոնյանի «Վահագն Վիշապաքաղի արկածները» վեպը նորագույն շրջանի մեր գրականության մեջ նախադեպ կարող է հանդիսանալ ու ոգեշնչել նաև գրողներին՝ գրելու արկածային ստեղծագործություններ, որոնց կարիքը մեր երեխաները շատ են զգում:

Զ. Պողոսյան

Միֆականի և իրականի սահմանագծին
(Էդ. Միլիտոնյանի «Վահագն Վիշապաքաղի արկածները» վեպը)

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են Էդ. Միլիտոնյանի «Վահագն վիշապաքաղի արկածները» վեպում իրականի և միֆականի համադրման փորձերը: Ցույց է տրվում, որ հեղինակը կերպարակերտման յուրահատուկ եղանակով արծարծում է պատանի ընթերցողի համար կարևոր ճանաչողական ու դաստիարակչական նշանակություն ունեցող հարցեր:

З.Погосян

На рубеже мифического и действительного / Роман Эдуарда Милитоняна <<Приключения драконаборца Ваагна>>/

Резюме

В статье обсуждается сопастоновленый анализ мифического и действительного в романе Эд, Милитоняна.Обсуждается, что автор

своеобразным методом изображает для юного читателя позновательные ивоспитательные важные вопросы.

Z.Pogosyan

On The Edge of Mythology and Reality
Edward Militonyan's «The Adventures of Vahagn Vishapackagh» novel

In the article there is examined the attempts of replenishment of mythology and reality of the novel by Edward Militonyan. The author represents very important cognitive and educative questions for his readers in a character-building way.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19